55.ԴԺԽՈՅՆ ՀԵՂԻՆԵ ԵՎ ԳԻՔՈՆ

Կըլլի էարիկ մի, կնիկ մի, մի տղա: էաս մարդը ուներ հինգ եզ: Տարին վեվ մի եզը օ լավ կըլլեր, Սուրբ Գեորգա մատաղ կիներ: Քանի տարի էտանկ գընըց: Տղան հասակը առավ տասնըհինգը, մատաղ չըրըց չորս հինգ տարի, շատ խարիպ իկիթ-աղքատ ընկավ:

Մարնը ըսըց. - Պապդ տարին մի աղկեկ եզ մատաղ կիներ. Աստված ընոր համար տվեր էր. օ պապդ մեռեր է, մատաղ չես ըրեր:

- Իրեք հատ եզ ունիմ. մե մի կա լավ. էան էալ հնիմ նե ինչո՞վ լուծք տի վարիմ. էան մատաղ չէղածնին չեն լուծք վարիր:

- Որդի՛, էրե, Սուրբ Գեորգ կը հասցնե Աստուծո կամքովը:

Ըրըց մատաղ, գիշեր-ցերեկ Ա.Գեորգա կը կանչեր՝ աղքատութան ինձիս ազատե:

Գիշերը էրածը էկավ Սուրբ Գեորգ, ըսըց. - Ճանփե մեարդ, քու եազուն թագավորի աղջիկն է, էրթա, թագավորի աղջիկը քիզի ուզե:

Տղան արթընցավ. հայավ օ էրգին մեջ է. մտոքը ըսըս. «Ես վե՞վ, թագավորը վե՞վ»:

Մինչև լոս՝ գիշերը իրեք հեղ արթընցավ, քնացավ, էրազ տեսավ, թե «թագավորի աղջինը ուզե»:

Առավոտնը էլավ մորնը ըսըց:

- Որդի՛, մեք վե՞վ, թագավորը վե՞վ, էադ էրած է, էնանկ բան մե. «Անոթին հաց կը տեսնա, չըլպըղը՝ լաթ»:

Տղան էադ էրկու չէղած եզը խառնեց առաջը, գընըց արտը. իրկունը էկավ, հացը կերավ, պառկավ, ավլա էրածը տեսավ օ էկավ Սուրբ Գեորգ,

խրը ձինը հեծեր, մզրաղը ձեառքը առեր, ճոթը շտկեց տղին. - Քիզի չըսի՞ թե «Մեարդ ճանփե, թող էրթա, թագավորի աղջիկը ուզե, պոշնը առիր իմ ըսածս»:

Տղան արթըցավ. - Մեարի՛կ, Սուրբ Գեորգ կինե էկեր է, առավոտնը տ'էրթըս:

Առավոտնը էլավ մեարը, փեշը ժողվեց, զարկեց գոտին, հասավ թագավորին սարայը, սուլթանի գլոխ տվեց, կայնավ:

Էաղ կնիկն էալ սուլթանի դայեկութին կիներ. չուճուղնուն պորտը ինքը կը կըյրեր, ժամը ինքը կը տաներ, ըսըց. - Սուլթա՛ն ապրած, էրկու լախրտու տի ըսիմ, չե՞ս հերսոտիր նե:

Սուլթանին քեֆին ժամանակը բերեց, ըսըց:

- Աստուծո էմրովը աղջիկդ տաս տղիս:

- Աստված օ էմր ըրեր է, ի՞նչ տի ըսինք: Թագավորին կըսիմ, գնա, առավոտնը էկո:

Թագավորը էկավ սուլթանին քով: Սուլթանը թագավորին ըսըց:

Բան չուներ, մի աղջիկ էր, աղջինը սիրած ժամուն:

- Աղջիկդ շատ կսիրես, վե՞ր տի տաս:

- Սուլթան, աղջիկս շեքեր շատ կսիրե, ըռնեջպարի տի տամ օ, արտը շեքեր ցանե:

- Թագավոր ապրած, մեր դայեկը էկեր՝ «Աստուծո էմրովը Դշխու Հեղիյայն իմ տղու տի տաք» կըսե, ի՞նչ կասիս:

- Առավոտնը օ էկավ, ինձիս խապար կուտաս, - ըսըց թագավորը, գընըց օսկի թախտին նստավ, մորվացը հետ կը խաղար:

Օսկի թախտի բոլորը ալմաստ քար զարկմուն էր:

Թագավորը մտածեց. «Էաս ինդո՛ւր կնիկ է, օ իմ աղջիկը տի ուզե»:

Կնիկը առավոտը էլավ, փեշերը զարկեց գոտին, կարմիր մոճագնին էալ հագավ, ընկավ ճանփա, հասավ, գլոխ տվեց սուլթանին: Սուլթանը թագավորին խապար տվեց, թագավորն էկավ ներս. օսկի սանտալիան դրին, նստավ վրան, դայեկն էալ արգաթե սանտալիեն նստավ: Թագավորը հանեց էան ժամանակի տաս օսկի տվեց:

- Դու մեր դայեկն իս, առ, գընը բանիդ, «կնիկ ղսմուն խելքը պակաս՝ մազը էրկան»: Սի տղա, մի չուք եզ ունիս, տար ըս օսկին էալ, առ եզ. ես քու տղան կը կարգիմ ուրիշ աղջկա հետ:

Պառապը ընկավ ճանփա, էկավ տունը. տղան էալ լծոցնը էկավ:

- Մեարի՛կ, թագավորը ի՞նչ ըսըց. ի՞նչ պատասխան բերիր:

- Թագավորը տաս օսկի տվեց, ըսըց՝ «թող եզ առնե, ես ուրիշ աղջի կը գննամ, կը կարգիմ»:

Տղան պառկավ, մտավ քունը, տեսավ օ, Սուրբ Գեորգ մզրախը ձեառքը կը կայնի. - Առավոտը կինե կէրթս՝ թագավորին մինե աղջիկը տի ուզես:

Պառապը էան լման գընըց թագավորին սարայը. սուլթանը կինե խապար տվեց Լալային, թե ղայեկը կինե էկեր է. թագավորը կինե հերսոտավ, ըսըց. - Փարա մի տվաք, խաղ ձգեցաք, քառսուն փարա տաք՝ խաղեն չէլլը:

- Պառապ, - ըսըց թագավորը, - կէրթս քու դռան տե իմ Քեմեր Ղափուս ծառ կը տնկիս, էրկու թարավն էալ՝ մի ծառ ընդին ուրիշ չեշիտ, մի ծառ ըսդին ուրիշ չեշիտ՝ ամենկը դիմաց դեմ, էնանկ կը տնկես օ, արև օլան գետինը չըյնի. աստըղկան մի պար արև չպտի էջնի. էադ մեկ: Իմ սարայեն խալտըրըմ կը շինիս մինչև քու դուռը, մի սրա օսկի, մի սրա արզաթ, էղավ երկուք: Սի տուն էալ կը շինիս իմ սարային վրա էրկու խաթ բարս, մի սրա արզաթ: էղավ իրեք: Քառսուն խաթար ձի, պիթուն հրեղեն տի ըլլի, ծովու միջուն, թույ գլոխ էալ մի օսկի, էղավ չորս: Հարսնիք կը բռնիս, տղադ էալ կըյնի առջևնին, կառնըս, կը բերես հոսի, էղավ հինգ: էսոք չկատարիս՝ գլոխդ կը զինիմ: Խեղճ պառապը նեղութան մեջ՝ էկավ հասավ տուն:

- Ի՞նչ ըսըց թագավորը, - հարցոց տղան:

- Ըսանկ, ըսանկ:

Տղան պառկավ, Սուրբ Գեորգ էկավ:

- էլիր, - ըսըց, - ձին հեծիր, էվել Քրիստոսի անունը կուտաս, սորա ինձիս կը կանչես. չմոռանաս, - ըսըց:

էլան ընկան օսկի խալտըրմին վրա, ժանկուռ-ժունկուռ գընցին նասան սարայը: Թագավորը հարսնիք բռնեց եոթ օր, եոթ գիշեր:

Թագավորը ըսըց. - Զաթի տղա չունեի, Աստված ինձիս վերըստեն տվեց էաս տղան:

Գցին ժամը. ութն օր կեցավ քապապուն տունը, առին գընցին թագավորի տունը, իրեք օր մընըց հոնի. իրեք ավուր էտև փեսա մանդիկը առին թագավորի փեսան, սազով, սեոհպեթով ընկան ճանփա: Քապապը թուրն էր բռներ գլոխը, ութ հատ ծառը առած՝ կէրթն, մի տավուլ առանջ է, մի սազ էտևանց է. չորս հոգի չոլախ կողմը, էրկուքը կը խաղան, էրկուքը փարա կը կպցնեն էադ խաղողնուն ճակատը:

Չորս հոգին էալ աջուկ թարավը կը խաղան. խաղալեն կէրթն, կը հասնին աղբիրը. աղբիրն օր հասան քապապը թուրը կը քաշե, կուտա փեսին չըլպախ (մերկ) թուրը, պատենքը՝ քապապուն ձեռաքը:

Քապապը կըսը. - Թագավո՛ր, թուրդ ջրին զարկ, տեսնըմ կը կըյրե:

Թագավորը ջուրը իրեք հեղ կը կըյրե. աղբեարը խոչը կը պառկեցընե աղբրին քով: Քապապը կըսը. - Թուրդ սրեցիր, մորթե, տեսնըմ՝ կըրնըս մորթեր:

Ասղը պայծառ, - ըսըց քապապ:

Թագավորը մորթեց ղոչը, թուրը զարկեց ջրին մեջ, վլացվավ. քապապը առավ, զարկեց պատենքին մեջ, ղոչը փեսա մանդիկը քապապու տունը տարին. քաթան էալ փեսի գլխուն վրան մայրեցին, ճաղպեցին, գըցին քապապու տունը. ուբ օր հեչ դուրս չէլավ:

Էդոր քապապը լալան էր. բերըց սարայը, տարավ աղջկա օդան, մեյտեղվան:

Սուրբ Գեորգ ըսած էր. - Լաթերդ հան, Քրիստոսի, իրան անունը տուր:

Տղան չըսըց. մոռացավ, պարկավ Դշխուհի Հեղյայի քովն: Առավոտնը էլավ օ տղան ինք իր տունն է. թագավորի էրած նոր լաթերն էալ վրան է, նե խալտըրըմ կա. նե ծի կա. նե բան կա, էան էրկու եզն է: Խառնեց առանջը, գընըց արտը, մեկը կը պառկի, մեկը կը կայնի:

- Քոռացավ աչքս, միտքս գընըց, մոռցա Սուրբ Գեորգ:

Տղան շատ նեղուբան մեջ մընըց. ավլա ավալքու Գիքոն:

- Մեարիկ, էաս լաթերս պեյե, տանիմ ծախեմ:

Մեարը դրըց տորպըկին մեջ, կախեց ցիցնի վեար:

Դժխուհի Հեդյա իրեք ամսվան պսակված էր, պապը վախճանավ, ինք նստավ տեղը. էղավ շատ զոռ թագավոր, պաշլայեց իրան օսկի սիրքե երիթմիշ* էնիլը. էնանկ հզոր թագավոր էղավ օ, աղքատները զենկին էղան, շատ աշխարքներ լուսավորվան. գեալը կուգար, գառին հետ կարծվեր. արջը կուգար, ընջղկան ու գոմշուն հետ կարծվեր, թըռչունները մարդու վրա կէջնային, շատ սեր ուներ, մարդ չէր կրնըր թռչուն զիներ, խաղաղ էր. ժամը էրթած ժամանակ ինչ օ թռչուն կար, կէլլըր թամաշա. կեսը աջուկ կողմը. կեսը չոլախ կողմը. աշխարքի արևցըթու թարավեն արևպատը էսօր անունը էլավ. շատ լավ թագավոր է:

---

* Դրամ բանեցընել (ծ.ա.):

Տարին թմավ, բերեց տղա մի. տղան գիշեր-ցերեկ կուլար, ծեանը չէր կըյրեր: Ճարը կըյրվավ, մարդ ծգեց էրկրոց էրկիր. «Վեվ օ էսոր պապը գննա, թագավորութինս էնոր լայեխ է»:

Տղին աջուկ թևին վրա նշան ուներ. վե՞վ ինչ գիտեր թե նշան կա թևին վրա:

Դշխու Հեղյայի ճարը կըյրած՝ տղան առավ, ընկավ ճանփա, Մամախաթուն, էփրատ գետին վրա, գարնա հատաղան էր, ջուրը ծով էր կըյրեր, չկրցավ անցներ էր. ջրին քնարը էջավ. բերեց էրգյուրումա վարպետ. պաշլայեց ըստեղ կարմունջ շինիլ տալը*:

Էադ էրկրի մարդը, վեվ օ լսեց, էկավ, բանավ, վեվ օ տի բաներ, տղան կուտար էնոր գիրկը, հայի թե ծեանը կը կըյրե: Գալողը տի գար էսոր քով, գրեր, տղան տի տար գիրկը:

Կարմունջը շինեց, թեքմիլ ըրըց. ջրին քովը վանք մի շինեց:

Չկրցավ գտեր էր նշանածը, դեվեստանը բարձավ օսկին, ընկավ ճանփա, գընըց հասավ Ատանա: Ատանու իլմաղը, գարուն էր, շատցեր էր, ծով էր կըյրեր. նե կարմունջ կա, նե կեմի: Մընըց ջրի ըսդին, Ատանա էալ ընդին:

Դշխուհին կանչեց վարպետնուն. - Էկեք, անցոցե՛ք, ձիզի օսկի կուտամ:

- Չի՛ք կրնըր, անտա՛, քանի օրեն ջուրը կէջնա:

- Թափեցեք ջրին մեջ օսկին, կանցնինք վրուն:

Փլեցին քառսուն տեվե, վարպետնին ըսին:

- Մի՛ փլեր, մեք կառնիք, կարմունջ կը շինիք:

Օսկին տվեց վարպետնուն, պաշլայեցին կարմունջ շինելը: Դշխուն Հեղինա չատըրը զարկեց, նստավ: Էրկրոց էրկիր մարդ չմընըց, ըսըց թե՝ «Կարմունջ կը շինվի, էրթըք միք էալ բանիք»:

Գիքոն ըսըց. - Մեա՛ր, լաթերը տուր, տանիմ ծախիմ, բանիմ, գամ:

Դշխուն Հեղյայի տղան էղած է չորս տարվան, հացը կուտե. ինչ օ տան, կուտե, տահա ծեանը չկըյրեր, կուլա: Շատ մարդիկ ըսին. «էաս օր լավ մարդ է. էսոր էրախան ինչո՞ւ էսանկ տի ըլլի»:

Գիքոն էլավ, իրան նոր փեսուքան լաթերը տորպակը դրըց. ընկավ ճանփա, շատ գընըց, քիչ գընըց, Ատանու կարմունջին վրա հասավ, տեսավ օ ամեն էրկրե մարդ էկեր, կը բանի:

---

* Մի այլ ճյուղի մեջ, լսած եմ, Չոպան քեռփրիսի (Վաղարշավանա) կամուրջը շինել տված է (ծ.ա.):

Գընոց օ գրվիր, դուռը կայնելուն քիմի տղան ներսը ծեանը կըյրեց: Դշխուն Հեղինե զարմանք մընոց. դուռը բացեց, տեսավ օ քսանը հինգ տարվա տղա մի կայներ՝ աշխրքի էրեսը չգտնվիր. լեաթ չունի, տկլոզ է, ըսոց. - էս չաղան օ գրկեցիր, ծեանը օ կըյրեցիր նե, խալխուն հինգ ղուրուշ կուտամ, քիզի քսան ղուրուշ կուտամ:

Գիքոն ծեառքը նետեց, զտղան գրկեց: Չաղան պաշլայեց պեխերը օլըրիլը, բռնիլը, հետը զրուցիլը, խնդալը:

Դշխուն Հեղինե ըսոց. - էաս իմ նշանածս տի ըլլի:

- Գիքո՛, տար չաղան խաղցուր, չատրեն չպտե հեռանաս: Եաթախ տվեց, հոնի կը պառկեր:

Չաղան մորը քով չէր կենար, կէրթր Գիքոյին քով, կըսեր, կը զրուցեր, կը խնդար, քովն էալ կը պառկեր:

Վեց ավուր էտե էնանկ արզև մի առավ օ սաղ Ատանու էրկիրը սել էլավ: Տղան եաթաղը նետեց չատրին մեջ. իրիկվա ժամանակն էր, ըսոց. - Ես կէրթը՛մ, Դշխուն:

- Հոս տի պառկիս, քիզի արզևին առաջ չեմ թողեր:

Մութը էկավ վրա, տղան առավ չատըրին մեջ, մոմը փակոց. մի շամատան տղին առանջ՝ մի շամատան իրան առանջ:

Իրան տղան խոսաց. - Ճրագ մի իմ առանջ, ճրագ մի քու առանջ. հըպա էաս մարդուն առանջ չկա՞:

- Էրկու հատ էր, էալ չկա. պոլ է:

Տղան շամատանը դրեց Գիքոյին առանջ:

- Ինչո՞ւ շամատանը դրիր էնոր առանջ. էկար իմինիս առանջ, էադ մարդը ի՞նչ շատ կը հոգաս:

- Իմ պապս է:

- Ի՞նչ իմաց կըլլիս օ քու պապդ է ըդի:

- Իմ էարինս շատ կեռա, սիրտս շատ կուզե էադ մարդուն:

Առավոտը էլան, Գիքոյին գեղացի մի կար, էկավ փարան առավ, ըսոց Գիքոյին. - Տուն կէրթըմ. չե՞ս իգար, յա էկո, յա փարա տուր, տանիմ տուն՝ մորդ:

Դշխուն տեսավ օ իրան գեղացին է, էկեր իրար հետ խորհուրդ կինեն տուն էրթալու:

Գիքո մտավ չատրը, կայնավ սուլթանին դեմ:

- Խնդրվի՛մ քինեն, փարաս տաս, էրթըմ, էտև չիմ կրնըր էրթըր:

- Օրականդ քսան ղուրուշ է, քառսուն թող ըլլի, քովս կեցիր:

- Չէ՛, չեմ կենար:

- Կեցիր, հաց դնիմ հետդ:

Հացը բերեց, դրեց տորպակը, տվեց տղին: Հայավ օ լեաթերը տորպըկին մեջ չեն. կըսկըծուն խելքը զիվանեեն էլավ:

Սուլթանը չապուճախ ջուրը հասոց սրտին վրա, տղան դողդողալեն նստավ, սուլթանը մտոքը անցոց. «Յոթ տարի է էաս տարի, աշխարքը օլրտա, զոռով գտա ես իմ գլխավորը. չոլերուն մեջ պառկա, մեշեենուն մեջ քնացա, խոտերուն մեջ էջա, արջուն մաղարան կեցա, շատ արզկին գեալուն բոնը մտա ես, ըս գլխավորիս համար էր»:

Շորերը հանեց, տվեց տղին, սիրտը դադարավ, մեղրե շերբեթ շինեց, տղին խմոց. տաս օսկի տվեց իրան: Գեղացուն ճանփու դրըց գլխավորին մինե գողտուկ, քառսուն օսկի էալ տվեց. «Կը տանես ըս տղին մորը»: Տղան ճանփու զարկեց. օլրվավ էկավ օ, տղան էլեր դուրս. կը հայի՝ իրան գեղացին հոտի չէ:

- Ի՞նչ բոլորդ կը հայիս, - ըսըց սուլթանը, - ճանփեցի քեվրան եղած խանը. ներս էկո, - ըսըց:

Տղին հետ մտան չատըրը:

- Սուլթա՛ն, քիզի ըրեճա կինիմ, լաթերս տաս, էրթըմ:

Բերեց լաթերը առջին. էլավ հայավ օ չատըրին բոլորը սալտ մարդ ին. իրիկվա էրկու սահաթ կա:

- Ես քիզի կը խընդրվիմ, առավոտը քիզի կը ճանփիմ իրիկունը հոսի տի մնըս:

Մութը վրա առավ, ճրագը փակոց. էրկու ամիս կեցեր էր, պաշլայեց տեֆթերը հայիլ: Հայավ, տաս օսկի տահա տվեց, գրեց: Տաս օսկի էալ էվելքունը, էղավ քսան:

- Չըլլիր օ տղան խաղցընես, քու բան ըսի է. ամսուն քիզի քառսուն օսկի կուտամ:

- Մեար մի ունիմ, մինակ է, պտի էրթըմ:

- էաս լաթերը չե՞ս ծախեր:

- Կը ծախեմ:

- Ինչո՞ւ մի կուտաս:

- Դու գիտես:

- էրկու հարիր օսկի:

Միլիոն կապվավ վրան:

Դշխուն Հեղինե պաշլայեց քննութին:

- Ըսի ուսկա՞ է քիզի, գողցե՛ր ես:

Տղան շվարավ, մընըց, էրեսին պենկզը գընըց:

- Մի վախի՛ր, գողուքին ըլլի, ես գինը կուտամ, կառնիմ:

- ես թագավորի աղջիկը առի, ըսանկ, ըսանկ էղավ:

Սուլթանը ծանոթուքին տվավ. - Դու իմ նշանածն իս, - ըսըց, - ել, հագիր քու լաթերը, - տվեց քեսեն ու չպողը:

Վարպետնին առավոտը էկան, պաշլայեցին դղրցընելը: Սուլթանը մարդ ճանփեց վարպետնուն. «իրեք օր չպտի բանվի. գլխավորն է էկեր»:

Կես գիշերուն թղթին վրա գրեց. «Կիրակոս թագավորը էկեր է»:

Առավոտուն վարպետնուն դոչեր տվեց. պարխանա, պարխանա ճաղպեց. իրեք օր կերան, խմեցին, քեֆ էրին:

Կարմունջը շինեցին, պաշ էրին, հսապնին կըյրեցին, գըցին:

Իրանք էալ ընկան ճանփա, գըցին Երուսաղեմ հասան. ըխտերնին ըրին, մատաղներ կըյրեցին:

Սուլթանը ըսըց. - Հրեղներու Քրիստոսու խաչափայտը վե՞ր տեղն է. հեր վեվ օ Քրիստոսու խաչափայտի տեղը ըսե, տեվի բեռ մի օսկի կուտամ:

Երուսաղեմ մարդ չմընըց. խապար տվին սուլթանին՝ չիք գիտեր:

Եահուտիստաննուն խախամ պաշին էկավ. - Սուլթա՛ն ապրած, մի ծերունի կա, էան օ չգիտեր, մարդ չի գիտեր. Սեսիա անունով մե մի է:

Ծերունուն խապար տվին. - Սուլթանը քիզի կուզե:

Շատ ծերունի էր, չէր կըրնըր գար: Խապար տվին օ չկըրնըր գար:

Սուլթանը գընըց ծերունու քով. բարև տվավ, նստավ:

- Քրիստոսու խաչափայտը վե՞ր տեղ է:

- Անկաճս չի լսեր:

Սաղ Երուսաղեմի մարդը թոփ էղան, չկրցան բան հասկըցուցեր էին:

Սուլթանը փետ մի խաչաձև շինեց, քսան հատ օսկի տվեց, բռնեց աչիչը դեմը. ըսըց. - Ըս է իմ փընտրռածը:

Չոկենը տվին ծերունու ձեառքը, մեկ ձեառքն էալ սուլթանը բռնեց. էկավ խաչափետին վրա կայնավ, չոկենով մխտեց. - էաս է, - ըսըց:

Պաղշիշը տվեցին, ծերունին գընըց ինք իր տեղը:

Ըստեղ էնանկ աղբ էին լցաց օ ղուրղուշուն նետեր, վրուն չէր պատենար:

Տաս օր մարդ թոփեց, չկրցավ գտեր էր. ծերունին հեմ՝ էլ բերին, ավլա էկավ ընտեղ, սալխցոց:

Սուլթանը ըսըց. - Փորելով չիք կըրնըր գննըր:

Էլավ բարս բլուլին վրա նստավ. Կիրակոս թագավոր էալ հետը. հրամայեց իրան ծառանուն. - Քառսուն տեվեի բեռ օսկի կա. բերեք:

Բերին, էջուցին քովվանը:

Էարիկ, կնիկ, մեկը բլուլին ըսդին, մեկը ընդին կայնան, պաշլայեցին օսկեստանը ցանիլը. սաղ ինչ օ մարդ կար երուսաղեմ, որը մազը կը քաշեր, կը տաներ դենը կը պարպեր. օսկին միջուն կառներ, ավլա կուգար, որը փեշը կը քաշեր, կը տաներ, օսկին կառներ, կինե կուգար, որը ճվալը կը քաշեր, վեվ օ ղուվաթով էր, խարարը կը քաշեր, որը՝ տորպակը, որը՝ գոյնոցը, որը՝ քթոցը կը լեցըներ, տաներ. որն որ քթոց չկար՝ կոռոճը:

Քառսուն բեռ տեվեի օսկեստանը թմավ, խաչափետն էալ գտավ, վլաց, մաքրեց, օսկիով քաշեց վրան, օծիլ տվեց, կայնեցոց խորանը, էլան գըցին տեղանը: